ՀԱՅԵՐԵՆ

Մարիոնետկա

Երաժշտություն՝ Լևոն Արևշատյան · Խոսք՝ Եղիշե Չարենց

Կամաց, կամաց, կամաց, կամաց,
Ոտքերն հողին, հողին, հողին՝
Եկավ-գնաց, եկավ-գնաց,
Գունատ, դեղին, գունատ, դեղին:

Ձեռքը շարժեց — մեկ վեր, մեկ վար,
Ոտքը խփեց — մեռնէլ, մեռնէլ,—
Առաջ եկավ դժվար, դժվար,
Ձեռքը շարժեց մեկ վար, մեկ վեր:

Ահա՛, ահա՛, — թեքվե՛ց, թեքվե՛ց,
Կընկնի՛, կընկնի՛··· բայց չէ՛, նայի՛,
Շուրթը շրթից դանդաղ ջոկվեց,
Մնաց մի պահ՝ աչքը մարի:

Ու սո՛ւր ճչաց՝ կարծես բռնի
Աչքերն, անշարժ, հեռուն գամած.—
Այդպես հոգի՛ն պիտի մեռնի —
Կամա՛ց, կամա՛ց, կամա՛ց, կամա՛ց···

ENGLISH

Marionette

Music: Levon Arevshatyan · Words: Yeghishe Charents

Slowly, slowly, slowly, slowly.
Feet on the ground, on the ground, on the ground.
It came and went, it came and went,
Pale and yellow, pale and yellow.

One hand stirred: now up, now down.
One foot struck: dead, dead.
It edged ahead. How hard, how hard.
One hand stirred: now down, now up.

Look now, look now: it leans, it leans.
It’s going to fall… But no, look there:
Slowly the lips began to part.
One moment still. A fading stare.

Then out it shrieked, as if compelled,
Its eyes fixed hard on something far.
And this is how the soul must die:
Slowly, slowly, slowly, slowly…

РУССКИЙ

Марионетка

Музыка: Левон Аревшатян · Слова: Егише Чаренц

Едва слышна, едва, едва,
Идет, идет, вот шаг и два,
Пришла, ушла, опять пришла,
Желта, бледна, едва жива.

Рукой махнет - то вниз, то вверх,
Ногой стучит -- мертвец, мертвец,
И лбом - в проем, с трудом, с трудом,
Рукой махнет, и вдруг -- конец.

Гляди - шатается, ползет,
Вот упадет! И вновь порыв-
Губа дрожит, открыла рот,
Застыв на миг, взор в смерть вперив.

На миг... И - в крик, как от ножа,
Глаза уставив вдаль, мертва...
Вот так умрет моя душа --
Едва слышна, едва, едва...